ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԿՆԱՐԿԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pam-bak@mail.ru

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

28 Փետրվարի 2025 թվական

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

գ. Փամբակ **ժամը 15 :00**

Նիստը վարում էր մասնակցային բյուջետավորման գործընթացը կառավարող հանձնաժողովի նախագահ Ռաիսա Մինասյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար՝ Աստղիկ Օհանյանը

Նիստին մասնակցում էին՝

«ՄԲ գործընթացը կառավարող հանձնաժողովի» նախագահի տեղակալ Հասմիկ Մացակյանը, անդամներ՝ Գրիգոր Կարապետյանը, Ավագ Հովհաննիսյանը, Սյուզան Հովսեփյանը, Սևակ Անանյանը, Մանե Հակոբյանը և Լուսինե Նազլուխանյանը:

Նիստից բացակա անդամներ չկան՝

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են հանձնաժողովի 9 անդամ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Քվեարկության արդյունքների ամփոփում:

զեկ. Ա. Հովհաննիսյան

2. Քվեարկության փուլը հաղթահարած առաջարկների ցանկի հաստում:

զեկ. Ռ. Մինասյան

3. Հաղթող առաջարկի հրապարակում:

զեկ. Ռ. Մինասյան

4. ,,Քվեարկության արդյունքների մասի,, հաշվետվության հաստատում:

զեկ. Ռ. Մինասյան

5. Հաղթող առաջարկի փոխանցում Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժին՝ ծրագրային հայտ մշակելու և լիազոր մարմին ներկայացնելու համար:

զեկ. Հ. Մացակյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ – Քվեարկության արդյունքների ամփոփում օրակարգի հարցը:

Զեկուցող Ավագ Հովհաննիսյանը հիշեցրեց, որ քվեարկությունը սկսվել է 17.02.2025թ–ին, ավարտվել 27.02.2025թ, ժամը՝ 13:00-ին: Նա ամփոփեց քվեարկության արդյունքները և ներկայացրեց յուրաքանչյուր առաջարկի համար քվեարկած ձայների թիվը.

Առաջարկի անվանումը	Քվեարկության արդյունքում	Քվեարկությանը մասնակցելու իրավունք

	քանակը	ձայների քանակը
Էքսկավատոր /բազմաֆունկցիոնալ/ տրակտորի ձեռքբերում, համայնքի ենթակառուցվածքների հզորացում:	329	111
Գորգագործության /կարպետագործության/ դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով:	138	111
Ազնվաձորի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի հատակի կահավորում ռետինե ծածկով:	164	111
Մարգահովիտի մանկապարտեզի համար թվով 30 մահճակալի /15 հատ երկհարկանի/ և թվով 60 աթոռի ձեռք բերում:	116	111
Մարգահովիտ բնակավայրի 3-րդ փողոցում կոյուղագծի /մոտ 1 կմ/ կառուցում:	102	111

***Քվեարկությամբ, կողմ՝* 9 հանձնաժողովը հաստատեց քվեարկության արդյունքները:**

2. ԼՍԵՑԻՆ - Քվեարկության փուլը հաղթահարած առաջարկների ցանկի հաստատում օրակարգի հարցը:

Զեկուցող Ռաիսա Մինասյանը ներկայացրեց, որ քվեարկության փուլը հաղթահարած են համարվում այն առաջարկը/ները, որի օգտին քվեարկել են քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսը՝ այն է 111 քվեարկող:

Նա ներկայացրեց քվեարկության փուլը հաղթահարած առաջարկներն՝ ըստ առավելագույն թվից նվազման կարգով.

1. Էքսկավատոր /բազմաֆունկցիոնալ/ տրակտորի ձեռքբերում, համայնքի ենթակառուցվածքների հզորացում: /329 ձայն/
2. Ազնվաձորի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի հատակի կահավորում ռետինե ծածկով: /164 ձայն/
3. Գորգագործության /կարպետագործության/ դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով: /138 ձայն/
4. Մարգահովիտի մանկապարտեզի համար թվով 30 մահճակալի /15 հատ երկհարկանի/ և թվով 60 աթոռի ձեռք բերում: /116 ձայն/

***Քվեարկությամբ, կողմ՝* 9 հանձնաժողովը հաստատեց քվեարկության փուլը հաղթահարած առաջարկների ցանկը:**

3. ԼՍԵՑԻՆ - Հաղթող առաջարկի հրապարակում օրակարգի հարցը:

Զեկուցող Ռաիսա Մինասյանը ներկայացրեց, որ հաղթող է համարվում ,,Համայնքի ենթակառուցվածքների հզորացում, Էքսկավատոր /բազմաֆունկցիոնալ տրակտորի ձեռքբերում,, առաջարկը, քանի որ նրա օգտին քվեարկել են առավելագույն՝ 329 բնակիչ և ,,Ազնվաձոր բնակավայրի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական

որի օգտին քվեարկել է 164 բնակիչ:

***Քվեարկությամբ, կողմ՝* 9 հանձնաժողովը հաստատեց քվեարկության փուլում հաղթող առաջարկները:**

4. ԼՍԵՑԻՆ -,,Քվեարկության արդյունքների մասի,, հաշվետվության հաստատում օրակարգի հարցը:

Զեկուցող Ռաիսա Մինասյանը ներկայացրեց, որ մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման նպատակով մշակված մեթոդաբանությամբ հաստատված են մի շարք հաշվետվությունների օրինակելի ձևաչափեր: Քվերակության փուլի ավարտի հետ կապված անհրաժեշտ է հաստատել քվեարկության արդյունքների մասի հաշվետվությունը: Կից ներկայացվում է հաշվետվությունը.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկի անվանումը	Քվեարկության արդյունքում հավաքած ձայների քանակը	Ծրագրի կարգավիճակը • *Հաղթող ծրագիր (քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը հաղթահարած)* • *Իրականացվող ծրագիր, մեկնաբանություն ֆինանսավորման աղբյուրների մասին* • *Չհաղթած ծրագիր*
Համայնքի ենթակառուցվածքների հզորացում, էքսկավատոր /բազմաֆունկցիոնալ/ տրակտորի ձեռքբերում:	329	*Հաղթող առաջարկ՝ քվեարկության արդյունքում հավաքել է առավելագույն ձայները, այն կիրականացվի: Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրներն են պետական բյուջեից ՄԲ-ի համար տրամադրվող սուբվենցիան և համայնքի բյուջեից ծրագրի ընդհանուր արժեքի առնվազն 20%-ի չափով ներդրում:*
Ազնվաձորի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի հատակի կահավորում ռետինե ծածկով:	164	*Հաղթող առաջարկ՝ քվեարկության արդյունքում հավաքել է ըստ աճողական առավելագույն ձայները, այն կիրականացվի: Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրներն են պետական բյուջեից ՄԲ-ի համար տրամադրվող սուբվենցիան և համայնքի բյուջեից ծրագրի ընդհանուր արժեքի առնվազն 20%-ի չափով ներդրում:*
Գորգագործության /կարպետագործության/ դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով:	138	*Հաղթող ծրագիր՝ հաղթահարել է քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը:*
Մարգահովիտի մանկապարտեզի համար թվով 30 մահճակալի / 15 հատ երկհարկանի/ և թվով 60 աթոռի ձեռք բերում:	116	*Հաղթող ծրագիր՝ հաղթահարել է քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը:*

Մարգահովիտ բնակավայրի 3-րդ փողոցում կոյուղագծի /մոտ 1 կմ/ կառուցում:	102	*Չհաղթած ծրագիր՝ չի հաղթահարել քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը:*
Քվեարկության մասնակիցների ընդամենը քանակ՝ 849		

Քվեարկությամբ, կողմ՝ **9 հանձնաժողովը հաստատեց քվեարկության արդյունքների մասի հաշվետվությունը:**

5. ԼՍԵՑԻՆ - Հաղթող առաջարկի փոխանցում Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժին՝ ծրագրային հայտ մշակելու և լիազոր մարմին ներկայացնելու համար:

Զեկուցող Հասմիկ Մացակյանը ներկայացրեց, որ առավելագույն ձայն հավաքած առաջարկը/ները կփոխանցվի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժին՝ ծրագրային հայտ/եր կազմելու և սահմանված ժամկետում՝ մինչև 01.04.2025թ-ը, լիազոր մարմին ներկայացնելու նպատակով:

Քվեարկությամբ, կողմ՝ **9 հանձնաժողովը ծրագրային հայտի մշակման առաջարկն ընդունեց ի գիտություն:**

Ծրագրային հայտի կազմման վերահսկողությունը դրվեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Հասմիկ Մացակյանի վրա:

Հանձնաժողովի նախագահ՝ Ռաիսա Մինասյան

Քարտուղար՝ Աստղիկ Օհանյան